

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության լրամշակված եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Ռուզաննա Առաքելյանի, Արմեն Ռուստամյանի, Լիլիթ Գալստյանի և Արսյուշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված փոփոխության կապակցությամբ հայտնում ենք, որ պետք է դատարան բողոքարկվեն եզրակացությունների հիման վրա լիազորմարմնի կողմից ընդունված՝ զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումն արգելելու մասին վերջնական որոշումները և ոչ թե եզրակացությունները, քանի որ եզրա-

կացությունները խորհրդատվական բնույթի որոշումներ են և պարտադիր չեն լիազոր մարմնի համար: Լիազորված մարմնի որոշումները վարչական ակտեր են, իսկ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է դիմել վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով խախտվել են իրենց իրավունքները: Այդ առումով հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն դատական կարգով կարող է բողոքարկվել միայն լիազորված մարմնի կողմից կայացված վարչական ակտը և ոչ թե ոստիկանության կամ ազգային անվտանգության մարմինների կողմից ներկայացված եզրակացությունը, որը վարչական ակտ չէ: Բացի դրանից, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վիճարկվող որոշումները դատարանի կողմից քննարկվելու ընթացքում ուսումնասիրվում են նաև այն եզրակացությունները, որոնց հիման վրա ընդունվել են կոնկրետ որոշումներ, և այդ առումով դատարանի կողմից գնահատվելու է նաև նշված եզրակացությունների հիմնավորվածությունը: Առաջարկում ենք հանել 1-ին հոդվածի 1-ին մասը:

2. 3-րդ հոդվածի համաձայն նախատեսվում է օրենքի 13-րդ հոդվածը լրացնել 8-րդ մասով, որի համաձայն «Լիազոր մարմնի և կազմակերպիչների միջև փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու դեպքում՝ իրազեկման մեջ նշված վայրից մինչև առաջարկված և համաձայնեցված վայր տեղաշարժվելու երթը համարվում է օրինական»: Նշված լրացումը չի բխում օրենքի, մասնավորապես, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներից, որոնց համաձայն երթը համարվում է հրապարակային միջոցառման առանձին տեսակ և դրա իրականացումը ևս առանձին պետք է օրենքով սահմանված կարգով իրազեկվի, ընդ որում, այդ իրազեկումը պետք է տրվի երթի ուղում գտնվող բոլոր լիազոր մարմիններին, իսկ իրազեկման մեջ պետք է նշվի երթի ուղին:

Բացի դրանից՝ լիազոր մարմնի և կազմակերպիչների միջև փոխադարձ համաձայնությունը ձեռք է բերվում մինչև հրապարակային միջոցառման օրը և այս դեպքում կազմակերպչի կողմից նախօրոք իրազեկված, սակայն լիազոր մարմնի կողմից մերժված վայրում ցանկացած հրապարակային միջոցառումը համարվում է ապօրինի: Այս պայմաններում խոսք չի կարող գնալ այդ վայրից այլ վայր տեղափոխվելու մասին:

Միաժամանակ երթի ուղին չճշտված և չիրազեկված ցանկացած երթի դեպքում կարող են խախտվել նաև օրենքի այլ հոդվածներով նախատեսված սահմանափակումների պահանջները, ինչպես նաև այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Առաջարկում ենք հանել նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը:

3. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 3-րդ կետի պահանջները՝ 1-ին հոդվածի 2-րդ մասում «վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով.

2) 3-րդ մասի պահանջները՝ 3-րդ հոդվածի 3-րդ մասում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

Նախագիծ
Պ-776-26.11.2009-ՄԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին Է Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին 2004 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-63-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ օրենք) 9-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին պարբերությունում՝

1. «կարող է բառը փոխարինել «, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում նշված եզրակացությունը կարող են բառերով,

2. Վերջին նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն մասով սահմանված հատուկ գրանցամատյանը Երևան, Գյումրի եւ Վանաձոր քաղաքների լիազոր մարմիններում վարվում է նաև էլեկտրոնային ձևով: Ընդ որում, էլեկտրոնային գրանցամատյանը պետք է տեղադրված լինի լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայք էջում, հնարավորություն ընձեռի ցանկացած անձի ստանալու ներկայացված իրազեկումների, դրանց բովանդակության եւ քննարկման ժամկետների, քննարկված իրազեկումների վերաբերյալ կայացված որոշումների մասին տեղեկատվություն: Տրված իրազեկումը՝ այն ներկայացվելուց հետո, իրազեկման քննարկման արդյունքների վերաբերյալ որոշումները՝ դրանք կայացնելուց հետո ոչ ուշ, քան երեսուն րոպեի ընթացքում մուտքագրվում են էլեկտրոնային գրանցամատյան:»

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասում «Եւ այլ ժամերե բառերը փոխարինել», այլ վայր (իրազեկման մեջ նշված օրը եւ ժամին), այլ ժամերե բառերով,
2. 4-րդ մասում «կամ միջոցառման բառերը փոխարինել», ինչպես նաեւ միջոցառման բառերով,
3. 5-րդ մասում «5-րդ մասովե բառերից հետո ավելացնել», ինչպես նաեւ սույն հոդված 4-րդ մասի համաձայն միջոցառման անցկացման վայրի համընկնումովե բառերը:
4. 7-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետեւյալ բովանդակությամբ. «8. Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ կամ 7-րդ մասերին համապատասխան միջոցառումը այլ վայրում անցկացնելու վերաբերյալ լիազոր մարմնի եւ կազմակերպիչների միջեւ փախադարձ համաձայնություն ձեռք բերելու դեպքում՝ իրազեկման մեջ նշված վայրից մինչեւ առաջարկված եւ համաձայնեցված վայր տեղաշարժվելու երթը համարվում է օրինական:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ ներկայացվող իրազեկումները մերժվում են այն պատճառով, որ իրազեկում ներկայացնող անձինք նախապես չգիտեն սովյալ վայրում նույն ժամին կամ նույն օրը անցկացվող միջոցառումների մասին եւ ներկայացնում են հայտեր, որոնք մերժվում են լիազոր մարմինների կողմից, կամ անհամաչափ վարչարարության հետեւանքով ներկայացվող իրազեկումները մերժվում են՝ ստեղծելով իրավակիրառական վատ պրակտիկա: Առաջարկվող փոփոխության նպատակը միջոցառում նախատեսող անձանց համար հնարավորություն կտա նախապես տեղեկանալ հնարավոր միջոցառումների անցկացման մասին, իրենց հայտերը ներկայացնելիս հաշվի կառնվեն արդեն իսկ ներկայացվող իրազեկումները, ինչպես նաեւ առավել կանխատեսելի կդարձնեն լիազոր մարմնի գործողություններ՝ ինչը բխում է թե ՀՀ սահմանադրության եւ թե նաեւ «Վարչական վարույթի եւ վարչարարության հիմունքների մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Բացի դա, առաջարկվող փոփոխությունների ընդունումն ու գործադրումը էականորեն կնվազեցնի միջոցառումների անցկացման իրազեկումների սահմանափակումներին առնչվող դատական վարույթների քանակը, առավել կթեթեւացնի լիազոր մարմնի աշխատանքները, կդյուրացնի քաղաքացիների կողմից ժողովներ, երեթեր կամ ցույցեր անցկացնելու սահմանադրական իրավունքի իրացումը:

Հատկանշական է, որ այս խնդիրների լուծմանը անդրադարձել են նաեւ ԵԽԽՎ-ն՝ իր 1677 բանաձեւով, ինչպես նաեւ Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների եւ դրանց պատճառների ուսումնասիրության ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովը՝ ՀՀ ԱԺ կողմից հավանության արժանացած եզրակացությամբ: Այսպես, ԵԽԽՎ 1677 բանաձեւի 10-րդ մասի համաձայն Վենետիկի հանձնաժողովը նկատում է, որ միջոցառումներ անցկացնելու հայտերը հաճախ տեխնիկական պատճառներով մերժվում են

կամ դրանց նկատմամբ կիրառվում են անհարկի սահմանափակումներ: Ուստի վեհաժողովը կրկնում է իր առաջարկը՝ պրակտիկայում հարգելու հավաքների ազատության սկզբունքը, եւ ի կատար ածելու ԵԽ ու ԵԱՀԿ կողմից ներկայացված հանձնարարականները: Ժամանակավոր հանձնաժողովի եզրակացության 7-րդ բաժնի իրավական-քաղաքական առաջնահերթությունների 5-րդ մասում նշվում է. «Չնայած կատարված դրական փոփոխություններին, Հանձնաժողովը գտնում է, որ ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու վերաբերյալ իրազեկումները հաճախ տեխնիկական հիմքերով մերժվում են, կամ դրանց նկատմամբ կիրառվում են անհարկի սահմանափակումներ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաեւ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում:»

Չհավակնելով լուծումներ տալու առկա բոլոր խնդիրներին, այնուամենայնիվ առաջարկվող փոփոխություններն այլեւս հրատապ են եւ բխում են ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիների իրավունքների անխափան իրականացման համար բավարար նախապայմաններ ստեղծելու հրամայականից: